

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑԻՆ

ՆԱ

ՀԵՏԱԳԱՅ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

I

ԺԲ. զարը տուրտարակ մեր միջնագարի գրականության և կուլտուրայի նշանակալից զարգացման շրջաններից մեկն է. այս այն շրջանն է, երբ հայ վերածնությունը, զուգադրյալով վրացական և ադրբեջանական գրականությունների աննախընթաց զարգացմանը (Ռուսթավելի և Նիզամի), նորից մերելք է ապրում: Հանդես են գալիս մի շարք գրական խոշոր դեմքեր, որոնք իրենց ստեղծագործություններով մեծապես առավել են մղում եկեղեցուց անկախ գրականության պատմությունը: Բաւական է բերել Մխիթար Գօշի և Ներսէս Շնորհալու օրինակները: Սրանցից մեկը՝ Մխիթար Գօշը, իր առակագրքով հիմք է դնում աշխարհիկ զեղարուեստական արձակին և հանդիսանում անտիկ շրջանից յետո՛ր՝ միջնագարի առաջին առակագիրը. իսկ երկրորդը՝ Ներսէս Շնորհալին, իր «Ողբ եղեսիոյ» պոէմով խոշոր չափով զարգացնում է աշխարհիկ, ժամանակակից իրական աֆիցիեր երգող ու պատկերող լիր-էպիկական պոէմի ժանրը:

Այսպիսի մի ժամանակաշրջանում բնականաբար չէր կարող մեծ հետաքրքրություն չյուշալանալ դէպի վերածնությունն նախահօր՝ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունները և առաջացաւ Այդ հետաքրքրութեան կարեւոր արտայայտություններից են այն, որ գրւում են Նարեկի մեկնություններ (Սարգիս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի), Նարեկացու կենսագրականներ (Լամբրոնացի, Սկեռացի, Էայլն) և շատ գրիչներ բազմացնում են նրա ստեղծագործությունների ձեռագրերը, իսկ մանրանկարիչները նկարում են նրա երևակայական պորտրետները:

Բուն գեղարուեստական գրականության շրջանակներում հրապարակ են գալիս «Ող-

բերգութեան» և տաղերի բազմաթիւ նմանողություններ: Միաժամանակ այդ պոէմի գլուխների խորագիրը (Ճի խորոց սրտից խօսք ընդ (Աստուծոյ») դառնում է ընդհանուր և սեփականություն, և շատ կրօնական բանաստեղծներ այդ դարձնում են մի տեսակ բնաբան իրենց ստեղծագործությունների համար: Ժամանակի մտաւորականների համար այնքան սիրելի է դառնում և օրինակելի է համարւում Նարեկի ոճը, որ անգամ իրենց արձակ ու ոչ գեղարուեստական գործերը, մանաւանդ ճառերը և «Եթըթերթը», գրում են այդ ոճով, յատկապէս ուշադրութիւն դարձնելով խօսքի սիմբոլ ու ժողացնելու վրայ: Բնորոշ են օրինակ՝ Գրիգոր Վկայասէրի «Եթըթերթը», որոնցից մեկը սկսւում է այսպէս. «Յաւելուած բանից սակաւուց խնթկեալ ի նետից գաղտնեաց խորհրդոց, և երեւալ արտաքոյ բանից տողորումս: Դարձեալ պաշտատիւ, և առաջի անկեալ աղաչեմ զամենառատոց և զյոքնապարգեզ . . .»: Եւ վերջանում է այսպէս. «Միացոյ զիս դարձեալ վերստին ի գլուխդ կենդանի»: Մի ուրիշը սկսւում է այսպէս. «Տառապեալ անձին, և խոցալից սրտի, անողջանալի հոգոյ, և գերեալ մտաց խօսք՝ ըստ կալիաց ցաւոց կարեւր բեկման առ ի միտս՝ աղերս մաղթանաց շարժեցան շրթանց՝ հեկեկանօք բայից դիտուին արկեալ առաջի որ տէրն է հոգւոց: Զինչ բարբառեցայց, և կամ զինչ ասացից առաջի քո որ տէրդ ես և դիտող սրտից . . .»:

«Ողբերգութեան Մատենախո» հետ նմանությունները միանգամայն ակնյայտ են:

Հէնց այս շրջանից էլ սկսւում է նաև Նարեկացու հեղինակութիւնն օգտագործուել եկեղեցականության կողմից: Նարեկացու նշանաւոր պոէմը, որը վերջին հաշուով մարդկանց համար աւելորդ էր կացուցանում եկեղեցականությունը, նոյն եկեղեցականութեան յետադիմական ներկայացուցիչները աշխատում են մեկնաբանել իրենց օգուտի և հակադրել գրականության մէջ արտայայտուող նոր տրամադրութիւններին: «Մատենան Ողբերգութեան» պոէմում մուծւում են մի շարք վերնագրեր և ծանօթություններ, զուցէ և առանձին հատուածներ, այն իբրև կրօնա-բարոյական և դասնաբանական մի գիրք ներկայացնե-

լու նպատակով՝ Նոյնիսկ Նալիանը պնդում է, թէ «Ողբերգութեան Մատենան» ընդարձակ վերնագիրը (որը մարդկանց սնանակատութեանն է ծառայիցնում գրուածքը) Նարեկացու գրածը չէ, այլ աւելացուած է Գրիգոր Սկեռացու ձեռքով. իր այս միտքը նա հիմնաւորում է այն փաստով, որ Սկեռացուց քիչ առաջ ապրած Սարգիս Շնորհալուն՝ Նարեկի առաջին մեկնութիւնների հեղինակին, յայտնի չի եղել այդ վերնագիրը:

Նարեկացու ստեղծագործական տարազիւանների ժիւ. դարի գրականութեան համար ունեցած բարեբար նշանակութիւնը ցոյց տալու համար բաւական է իւր օրինակ վերցնել այդ շրջանի կենտրոնական, խոշորագոյն գրական դէմքի՝ Ներսէս Շնորհալու գրուածքները:

Ներսէս Շնորհալին թողել է թէ՛ հոգեւոր և թէ՛ աշխարհիկ պոէմներ ու բանաստեղծութիւններ: Ամէնից առաջ նա շնորհիւ Նարեկացու հարթած ճանապարհի՝ դուրս է գալիս հին եկեղեցական բանաստեղծութեան ժանրային շրջանակներից և գրում է նոր տեսակի գործեր, թէկուզ գրանց բովանդակութիւնը շատ դէպքում գեւա մնում է կրօնական: Այսպէս է միջնադարում շատ տարածուած նրա պոէմներից մէկը, որի վերնագիրն է «Ողբերգութիւն վրայասանական ի տալից սրբոց» («Յիսուս որդի»): Շնորհալին Նարեկացու նման միտակի չէ, նա Հայ եկեղեցու պաշտօնական գաղափարախօսներից է. բայց պոէմը կոչում է «Ողբերգութիւն»: Ի հարկէ, ստեղծագործական կարողութեան տեսակետից Շնորհալին չի կարող Նարեկացու հետ համեմատուել և նրա «Ողբերգութիւնը» Նարեկի թոյլ և հեռաւոր արձագանքը կարող է համարուել միայն. բայց տուեալ դէպքում խնդիրը այս չէ, այլ այն, որ Շնորհալին, Նարեկացու նման, իր այդ ընդարձակ պոէմը գրել է ոչ թէ եկեղեցական արարողութեան համար, այլ եկեղեցուց դուրս՝ ընթերցանութեան համար: Սա արդէն գրական-պատմական առումով նշանակալից երևոյթ է:

Հետաքրքրականն այն է, որ նոյնիսկ բուն եկեղեցական բանաստեղծութեան մէջ Նարեկացուց յետոյ մի թարմ շունչ է մտնում: Այդ բանը նկատուում է հէ-

եալ Շնորհալու ստեղծագործութիւններից. նրա շարականները, երգերը և մեղեդիները պոէտիկական շատ նորոյթներ ունեն, պատկերները աւելի հիւսկեղ են ու բազմազան: Շնորհալին, հետեւելով Նարեկացուն, նոյնիսկ այդ կարգի բանաստեղծութիւններում նկարագրութիւնների ժամանակ և իր տրամադրութիւններն արտայայտելիս յաճախ դիմում է բնութեան պատկերների օգնութեան: Օրինակ՝

Արեգակն արդար ըզնուր սիրոյ ծագեալ,
Ջանհաւատութեան սառնքն ճեղաց հալեալ,
Բանաւոր ծառոց երեւեցան ծաղիկք
Երկնագագաղ գունով, անուշահոտ բուրմամբ,
Գարուն հոգեւոր դալարացոյց զնոգիս.
Գոսպեալ քրկնոց կանաչացան սաղարթք:

Կամ՝ մի այլ տեղ, Քրիստոսի ծննդեանը նուիրուած երգում.


Սիրամարգ ոսկիսիպ նրկար յոգի,
Տաքեալ ողջախոն մաքուր աղաւնի:
Էրեւեալ ծաղիկ զարնայնոյ
Վարդ, մանիւշակ, բրնձ, շուշան վայելուչ,
Սարդիոն յակիւնք դանձանակ,
Յամպիս, կարկիհան, զմուխս, շափիլայ...:

Իսկ շատ դէպքում էլ Շնորհալին Նարեկացու նման դիմում է ժողովրդական բանահիւստութեան ձեւերին. այսպէս՝ նրա մօտ պատահում են այնպիսի երգեր, որոնց տները ունեն գուսանական առդերի ոճով կրկնակներ: Օրինակ՝

Սիրասնունդ սիրամարգ սրլարալի,
Նրբափալլ ոսկերեւ տաքալի,
Խռապոսակ իւրագլուխ ցանկալի,
Հրեւեակ հրաւապեղ Հոփսիսիս:

Իսկունքն աղաւնի օդապար,
Նոր նոյնան սալանն է քոյզ դադար,
Յմաստան արագիլ դու արդար,
Հրեւեակ հրաւապեղ Հոփսիսիս:

Ոչ միայն ժողովրդական առդերի ոճը, այլև լեզուն օգտագործում է Շնորհալին. այդ նկատելի է յատկապէս նրա չափածոյ հաներուկների գրքում: Լեզուի հարցում Նոյնպէս հետեւելով Նարեկացուն, Շնորհալու պատմականորէն նրանից առաջ է անց-



Նրա ստեղծագործութիւնները լիզուեց
արդէն պարզ զգացնել է տալիս միջին հա-
յերէնի սպասուող մտաւալում յաղթանակը
գեղարուեստական գրականութեան մէջ:

Բայց վերջ ի վերջոյ Նարեկացուց ներ-
շնչուելով՝ նրա գործը շարունակելու և
զարգացնելու տեսակետից աւելի նշանաւոր
են Շնորհալու աշխարհիկ ստեղծագործու-
թիւնները, յատկապէս «Ողբ Նիգեսիոյ» պոե-
մը: Նարեկում արտայայտութիւն գտած
հայրենասիրական քաղաքական վիշտը
իրան աշխարհիկ մոտիվ՝ միջնադարում իր
բաւական անմիջական և բաւական ցայտուն
արտայայտութիւնն է գտնում Շնորհալու
այդ աշխարհիկ թիմա ունեցող պոեմում:
Շնորհալին թէպէտ իր «Բուն բարառնական»,
Տաղիւ չափեալ հոմերական, խօսեալ բա-
նիւ ողբերգական պոեմում պատմում է
«վասն Նիգեսիոյ մեծի առման», բայց հիմ-
նականում արտայայտում է կիրևկիայի հա-
յերի հայրենասիրական քաղաքական տրա-
մադրութիւնները, այն, որ նրանք չէին
հաշտուում Բագրատունիների թագաւորու-
թեան վերացման փաստի հետ: Այս իսկ
պատճառով, չնայած այն բանին, որ Անին
գեռ չէր կործանուել, և քաղաքի ներքին
կեանքը դեռ ուժեղ եռուցիւղ էր ապրում,
սակայն Շնորհալու պոեմում այն պատկեր-
ուած է սրպէս Նիգեսիային ողբակից մի
«զարդի ծածկոյթը» պատուաւած քաղաք:

Շնորհալին (ինչպէս և նրանից յետոյ
բազմաթիւ այլ բանաստեղծներ) երբ իր
պոէմի վերնագիրը գրել է «Ողբ», այդ
բնաւ չի նշանակում, թէ նա բոլոր հեռա-
նկարները կորցրած, առնյալ ողբասաց է:
Նրան ողբասաց համարելը սխալ կը լինէր,
ինչպէս կապիտ սխալ է եղել որոշ քննա-
դատների կողմից Արափեանի «Ողբի» («Ողբ
Հայրենասէրին») մասին այդպէս մտածելը:
Շնորհալու ողբի էական կողմը պատահած
գծախտութեան դէմ պայքարի կոչն է ու
խրախուսել և ապապաշտել օրերի հաւատքի
ներշնչումը: Պոէմի վերջում, Նիգեսիան
գլխաւորաբար հետեւեալ խօսքերն է ասում.

Անա սակաւ ինչ ժամանակ,
Փոխեզ զպետը զուրն ի յսակ,
Սև քա ըմպել՝ դառնաճաւակ,
Այնմ որ արքայ իր զմզմակ,

Զվերջին մըրուրն կապուտակ,
Աբուլցանե նրմին բաժակ.
Իսկ ինձ պայծառ եւ քաղցրունակ,
Զանմահաւարն՝ ըմպել վսակ . . .:

Այս լաւատեսութիւնը յատուկ է միջ-
նադարի մեր գրականութեան առաջաւոր
ներկայացուցիչներին:

Շնորհալին վերնագրում իր պոէմի հա-
մար գործածում է «Տաղիւ չափեալ հոմե-
րական» արտայայտութիւնը. սա ուշադրու-
թեան արժանի հանգամանք է. ուրիշ փաս-
տեր էլ կան, որոնք ցոյց են տալիս, թէ Ժ.
Գարից սկսած, Հայաստանում Մարտիկից
առաջ ստեղծուել էր Հոմերոսի նկատմամբ
մեծ հետաքրքրութիւն: Ժ. Գարի սկզբների
նշանաւոր բանաստեղծ և գիտնական Յով-
հաննէս Սարկաւազ ի մասնաւոր իր
պոէմներից մէկում («Բան . . . առ ձագն
որ կոչի Սարիկ») նոյնպէս յիշատակում է
Հոմերոսի անունը. «Հոմերական տաղիցն
չափ քե ծանուցեալ լինի բազմաց . . .»:
Ժ. Գարից յետոյ՝ այսպիսի յիշատակու-
թիւններ աւելի են շատանում. այսպէս՝
Ստեփանոս Օրբէլեանը իր պոէմի («Բան . . .
ի զիմաց Վաղարշապատու . . .») մասին ա-
սում է «Շարադրեալ չափաբան բերմամբ
հոմերական արհեստիւ . . .», Գրիգորիս Ող-
թամարցին իր սիրոյ երգերից մէկի վեր-
ջում գրում է. «Զքեզ գովեմ հոմերոսօրէն»,
Սիմէոն Աղաբաղցին իր պոէմներից մէկի
(«Ողբ ի վերայ Մեծոփայ Ս. Ուխտի») մա-
սին ասում է. «Ոգեալ ոտիւք հոմերա-
պէս . . .»:

Չնայած այս բոլոր յայտարարութիւն-
ներին, դրանց հեղինակներից և ոչ մէկը
իսկապէս Հոմերոսի նման էպիկական պոէմ
չի գրել: Զարմանալի կերպով ինչքան էլ
նրանք սիրելի ու բարձր են գնահատել Հո-
մերոսին և ըստ երևոյթին ձգտում են ու-
նեցել նաև իրենց ստեղծագործութիւննրի
էպիկական կողմն ուժեղացնել (յատկապէս
պոէմներ գրողների մասին է խօսքը), բայց
այդ չի ստացուել: Վերոյիշեալ բոլոր պոէմ-
ներն էլ, զրանց թուում և «Ողբ Նիգե-
սիոյն», գերազանցապէս մնում են լիրի-
կական պոէմներ, որոնց վրայ թնամարած
իշխում է ոչ թէ Հոմերոսի, այլ Նարեկա-
ցու շունչը և հանճարը:

ԺԳ. դարի առաջին կեսին Հայաստանը ընկնում է մոնղոլական լծի տակ. Ժողովուրդը ենթարկվում է չտեսնուած աղէտի. մոնղոլները սխտեմատիկաբար կոտորում ու տնտեսական դաժան կեղեքման են ենթարկում Ժողովրդին: Առանձնապէս նրանց գործած աւերածութիւններին ենթարկւում են Զաքարեանները: Երբեք չեն տակ գտնուած շրջանները: Կիրիկիան միայն գերծ է մնում նրանց ներխուժումից՝ շնորհիւ տեղի հայկական պետութեան վարած որոշ քաղաքականութեան: Ժ. դարում սկիզբ առած և ԺԲ. դարում նոր արտայայտութիւններ ստացած վերածնութեան գծերը այս կամ այն չափով շարունակուած են յարտենել Կիրիկիայում և յայտնի մի քանի վայրերում: Այդ շրջանում գեղարուեստական գրականութեան մէջ առաջաւոր գրողները արդէն մեռած գրաբարի գործածութիւնից հրաժարուած են, մի բան, որ շուտով տարածուած է ամբողջ Հայաստանում և դառնում է համարեա թէ ընդհանուր երևոյթ: ԺԳ. դարից սկսած, այլևս մեր բոլոր նշանաւոր բանաստեղծները գրում են միջին հայերէն լեզուով: ԺԳ.-ԺԶ. դարերում նարեկացու ստեղծագործութեան մի քանի գծեր շարունակուած ու զարգացնում են Ֆրիկը և Կոստանդին Երզնկացին: Ֆրիկը անձամբ ապրած լինելով մոնղոլական լծի ողջ սարսափները, իր ստեղծագործութեան առաջին շրջանում ծառանում է այդ սարսափների դէմ իրրե միտքի: Նա իրրե միտքի բանաստեղծ միանգամայն ինքնատիպ է թէ՛ ժանրով և թէ՛ պոէտիկական ողջ կուլուրը: Տարբերելով նարեկացուց՝ նա գրում է ոչ թէ ընդարձակ լիրիկական պոէմ, այլ սովորական բանաստեղծութիւններ: Նա կարող է մեր գրականութեան մէջ ժամանակակից ըմբռնումով իսկական սուրբիկով լիրիկայի սկզբնաւորողը համարուել: Ֆրիկը իր առաջին շրջանի բանաստեղծութիւններում աշխատում է ծանր գրութիւնից փրկութեան յոյսը արտայայտել: Աստծուն միանալու հնարաւորութեան հաւատով. նրա երգած այս մոտիվը հիմնական գծերով նոյնն է, ինչ որ նարեկացուները:

Ֆրիկը մի բանաստեղծութեան մէջ դիմելով Աստծուն, ասում է.

Սրբ բացե՛ր զիմ զմիսս, որ ես կու գգամ,
Վառեցաւ սեղոյ ի յիս, գերդ հուր կու եռամ:

Քանի որ այսպէս է, ապա բանաստեղծի հոգին ձգտում է հասնել Աստծուն, որպէս կենդանութեան աղբիւրի: Բայց այստեղ ծագում է ողբերգութիւնը, որովհետեւ նրան թւում է, թէ լոյսին ձգտելով՝ աւելի խաւարին է մօտենում:

Ջանացի թէ լոյսն ելեմ,
ի խաւարն խիս մօտեցայ...

Իսկ ինչո՞ւ, դա պարզ է, չէ՞ որ ինքը ապրել է աշխարհիկ կեանքով, ուրեմն կորցրել է հոգու մաքրութիւնը և աղնուութիւնը. մի սեղ նա գրում է.

Յառաջ որ յաշխարհ եկի, հանց յիսակ էի,
զինչ գնայի, Պանիկ մի վերայ կացի ժանգ առի, զինչ
ըզպղնճի:

Իրեն համարելով պղնձի նման ժանգոտած, նա բռնում է անեղ դատաստանի ահով և ինչպէս սեպած ամպ անձրևում է: Սակայն այսպիսի մի ըմբոստ խորհրդածութեամբ նա ամբապնդում է փրկուելու յոյսը, որից յետոյ նա հոգեպէս խաղաղուած հաստատ յայտարարում է.

Փափագել եմ ի ջուրն յուռով կու գնամ,
Թէ հասնիմ յայն աղբիւրն, որ կենդանանամ:

Իր երկրորդ շրջանի ստեղծագործութիւններով՝ Ֆրիկը շարունակելով ու զարգացնելով նարեկացու քաղաքական և սոցիալական մօտիվները, արդէն նոր խօսք է ասում. նա հիմք է դնում բացայայտօրէն Ֆէոդալական կարգերի դէմ ուղղուած քաղաքական-սոցիալական լիրիկային: Այդ մօտիվներին անցնելիս Ֆրիկը ռէալ իրականութեան ըմբռնման մէջ այնքան է խորանում, որ միտքիցիմաց հրաժարուելով՝ ըստ էութեան հասնում է Աստծու գաղափարի հերքման: Սպալտով, նա մեծ նորութիւն է բերում ոչ միայն ԺԳ. դարի մեր գրականութեան, այլև համաշխարհային գրականութեան մէջ:

Կոստանդին Երզնկացին նոյնպէս խոշոր նորարար է, ներշնչուած լինելով նարեկացուց՝ յատկապէս նրա սաղերից, նա նախ և առաջ մեր գրականութեան մէջ զարգացման աւելի բարձր աստիճանի հասցրեց բնա-

պաշտական բանաստեղծութիւնը: Երգեկան-
ցու համար արարիչը՝ զերջին հաշուով բը-
նութիւնն է, երկիրը. ամէն զեղեցիկի և
բարիի ծննդեան պատճառը երկիրն է:

Երկիրս է մայր տննրմանի,
Ձինչ գեղեցիկ իրք՝ ծրմանի,
Շոտ բարութիւնք յիցք սրնանի.
Հանց որ փոխն գեղեցկացել:

Իսկ երկիրը իր ստեղծագործ զեղեց-
կութիւնը երեւան է հանում գարնանը, ուստի
գարնան զովերգութիւնը պէտք է բնա-
պաշտ բանաստեղծի հիմնական մոտիվներից
մէկը դառնար, և, իրօք, Երզնկացու մօտ
հանդիպում են գարնան մի քանի սքան-
չելի օրհներգութիւններ:

Ձրմեռն բանդ եր եւ խաւար.
Գարուն եհաս ու նոր բահար,
Ի եռա ի մէջ գիւտեմ աւար,
Ձի արեգակն է մեզ ծագել: ...
Երբ որ ճնչեց ճողմըն հարաւ.
Ձինչ օրհներգիւն՝ երկրէ տարաւ.
Հանց որ չկա տեղ մի ծարաւ,
Ամենն են բարութեամբ լցել:

Բայց չէ՞ որ երկրին ձմրան բանտից
զուրս բերողը արեւն է, որը այսպիսով
նախապատճառն է երկրի, բնութեան, մար-
դու համար օգտակարութեան և կենսա-
բեր գեղեցիկութեան. բնականաբար այստեղ
բնապաշտ բանաստեղծը պէտք է իր ամբողջ
հոգու ուժը հանդէս բերեր մեծ լուսատուին
վեհ և մեղմամբարձ ռոնով օրհներգելու հա-
մար:

Անա գիւտեա եանց ճրեան եղել առաւօտուն.
Աստղն պայծառ ծագեց, և ետևաւոր երեկ
լուսոյն.
Խաւարն հերեցաւ ու ցնծացաւ աշխարհիս
ամեն,
Երեկ ետուն միմեանց՝ որ արժանի եղին
լուսոյն:
Երկիր կենդանացաւ ու լեռն ու դաւոց կա-
նաչ բուսան,
Մաղիկ բերին ծառերն յարեգական ի մեծ
լուսոյն.
Մաղկունքն զարգարին ազգի ազգի գոյնը-
գոյնով,
Փռնի վարզն կարմիր յարեգական ի մեծ
լուսոյն:

Ամբողջ բանաստեղծութեան մէջ այս-
պէս՝ ամէն տան երկրորդ տողի վերջում
կրկնուում է զյարեգակն ի մեծ լուստնն
արտայայտութիւնը, ինչպէս երաժշտական
գործի լեյամոտիվ, ոչ այնքան ուրիշական
նպատակով. որքան իրէական բովանդակու-
թեան մէջ էականը ընդգծելու մտադրու-
թեամբ:

Երզնկացին զերջին խոշոր բնապաշտն է
մեր միջնադարեան գրականութեան մէջ.
Նա ինքը իր մի շարք բանաստեղծութիւն-
ներով հիմք դրեց սիրային քնարերգու-
թեանը, որը նրանից յետոյ իշխող տեսակը
գարձաւ. եւ իսկապէս, սկսած ԺԴ. դարի
վերջերից մինչև ԺԹ. դարը ներառեալ,
մեր պոէզիայի խոշորագոյն ղէմքերը ար-
դէն սիրոյ երգիչներն են, որոնց թւում
Յովհաննէս Թլկուբանցին, Գրիգորիս Աղ-
թամարցին, Նահապետ Քուչակը, Նաղաշ
Յովնաթանը և Սայաթ-Նովան:

Սիրոյ երգիչները արտայայտելով իրենց
ստեղծագործութիւններում հումանիզմի ու
բուհական տենդենցներ՝ շատ անգամ քացար-
ձակապէս հակադրում են եկեղեցական
աշխարհայեացքին, սիրոյ զգացումները
մարդու մէջ աւելի ուժեղ և զօրաւոր հա-
մարելով՝ քան կրօնականը: Նրանք իրենց
կենսախիղճ տաղերը գրելիս հետեւում են
պոէտիկական այն ուղիներին, որոնք բա-
ցել էր Նարեկացին իր տաղերով: Սիրոյ
երգիչները աշխատում են այն միտքը վար-
դացնել, թէ մարդու համար իսկական եր-
ջանկութեան հասնելու նւարաւորութիւնը
տրուած է այս աշխարհում և ոչ թէ հան-
դերձեալ կեանքում, ուստի նրանք իրենց
տաղերում հետեւողականօրէն արտայայտում
են մարմնական-աշխարհիկ վայելքների
պաշտամունքը. այսպիսի պարագաներում
մարդու, յատկապէս կնոջ ֆիզիքական գե-
ղեցկութեան նկարագրելը պէտք է մեծ տեղ
բռնէր նրանց բանաստեղծութիւններում և
այդպէս էլ է: Նարեկացու «Մենդեան տա-
ղերի» համեմատութիւնները և էպիտեո-
ները, ինչպէս և Ժողովրդական բանահիւ-
սութիւնը, դառնում են այն ամբողջ հիմքը,
որի վրայ բարձրանում է ԺԴ.-ԺԹ. դա-
րերի մեր սիրոյ երգիչների գործերի պոէ-
տիկական գեղեցիկ կառուցումը:

Թլկուբանցու եօթ լաւագոյն սիրոյ եր-

գերից հնգի մէջ գործածուած է նարեկացիական «ծով» էպիտետը աչքերի գեղեցկութեան համար. «Ծով ծով աչքեր ու լուսքնար . . .», «Աչքերն է ծով. ունք է թուխ ամպ . . .», «Ախ սիրէ վրա, ծով աչքեր . . .», «Աչքեր ունք գինջ ծովերուք» . . ., «Աչքեր է ծովեր խուսար ու միտտան . . .»: Այնուհետեւ՝ նարեկացու «Ծոցն լուսափայլ կարմիր վարդով լցնալ» պատկերին համապատասխան՝ Քլկուրանցու մօտ կայ ձոցդ է բաղչա վարդով ի լիս, կամ՝ «Քո ձոցդ է ձաղկոց . . .» պատկերները: Նարեկացու ձոցին ի գնալ շողն ի կաթիլ առնոյր արտայայտութեան համապատասխան՝ Քլկուրանցու մօտ կայ սշողայր կաթիլ լոյսն ի վզին» արտայայտութիւնը և այլն: Նոյնը և Աղթամարցու մօտ. «Աչքեր ծով ի ծով լինիս . . .», Յովսէփի Սեբաստացու մօտ. «Աչքն է ծովեր, վարսերն ոսկեր, Ղազար Սեբաստացու մօտ. «Ծով աչք, ա՛մ քանի նայիս խոլորով և այսպէս անվիրջ, նարեկացուց որեւէ բան անպայման պատահում է սիրին երգիչների կողմից օգտագործուած, առանց սեփական ինքնատպօթիւնը աննշան չափով իսկ փնտ հասցնելու:

Վերին աստիճանի հետաքրքրական մի փաստ է ներկայացնում իրենից Դրիգորիս Աղթամարցու սիրոյ երգերից մէկը, որը ցոյց է տալիս, թէ ինչպէս նարեկացու ոչ միայն տաղերի, այլև Մատեան Ողբերգութեան» պոէմի կուլտուրան օգտագործուել է սիրային բանաստեղծութիւնների համար: Աղթամարցին ոչ միայն մի բաւական գեղեցիկ ակրոստիքոս է գրել նարեկի բուն ոգով («Եղուկ մի վայ, որ միջօք աղտեղեցայ. զեկերս ի ծով ի իջեայ և հողմով չարին փարեցայ»), նոյն նարեկի ոճը, արտայայտութիւնները օգտագործել է նաև իրեն սիրոյ երգիչ:

Մասց աչօք ինձ երեւիս.

Բնակեալ ես դու յիմում սրճիս,
Ծրարեալ ունիմ զեգ ի հոգիս:

Բանաստեղծն իր համարձակութեան մէջ այնքան է առաջ գնացել, որ սիրուհւոյ և նրա նկատմամբ տածած իր զգացմունքներին մասին խօսում է այնպէս, կարծէք թէ Աստուծոյ մասին խօսելիս լինի: Միջնադարեան սիրոյ երգերում պատահում է և սրան հակառակ դէպք. բանաստեղծը ցանկանում է նարեկացու նման «մեղայններ ասել ու դիմում է Տիրաձօրը՝ միաժամանակ գովերգելով նրան». բայց այդ գովերգութիւնը այնպէս է ստացւում, որ կարծէք թէ իր սիրուհւոյ մասին գրելիս լինի (օրինակ՝ Թոռ Գուլակի «Բան զղջական» բանաստեղծութիւնը):

Այսպէս՝ նարեկացին իր հմայքը շարունակում է պահպանել միջնադարի ողջ ընթացքում: Երբ սկսում է հայական տպագրութիւնը՝ մի քանի տասնեակ տարի անցած հրատարակում են նրա «Մատեան Ողբերգութեան» պոէմը և ներբողները: Ձեռյած տպագրական գործի այն ժամանակուայ դժուարութիւններին, նարեկացու Մատեանը շատ անգամ վերահրատարակում է. իսկ եթէ հաշուենք այդ գրքի նաև նոր հրատարակութիւնները, ապա գրանցքանակով՝ անցեալի հայ տպագրութեան մէջ երեւի ոչ մի գիրք չկարողանայ մրցել նրա հետ: Ճիշդ է, նարեկի հրատարակչները հետապնդում էին կրօնական-յետադիմական տենդինքներ և այդ պոէմը ներկայացնում էին որպէս լաւագոյն ազօթագիրք. բայց միեւնոյն է, մեր կուլտուրայով բարձր գրողների համար այն մնում էր ստեղծագործական ուսուսմանութեան լաւագոյն աղբիւր:

Մ. ՄԿՐԵԱՆ

(Շարունակելի՝ 16)



Դեղեցկագեղ ֆայցաբաբառ,
Սեբ քո ունի խորհուրդ անհառ,
Իմանալի արեւ պայծառ,
Լուսաւորեա միս իմ խաւար:
Դրախտ վայելուչ, ծառ պսղաւոր,
Քաղցրանաւակ եւ գինի նոր.
Սիրով արբեալ քո անաւոր.
Ի սենեկին խորհրդաւոր:
Սքէ յաչաց մարմնոյս ծածկիս,